8690

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան
«25» 05 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0098-23

Ձեռնարկողը՝ ***Հրանտ Գուլանյան***
Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, Ծովագյուղի 13փ., նրբ.2., 10

Գործունեությունը՝ ***Ռանչպար համայնքի ձկնաբուծական տնտեսության համար նախատեսված ավազանների կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Արարատի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0098-23

«25» 05 2023թ.

Արարատի մարզի Ռանչպար համայնքի ձկնաբուծական տնտեսության համար նախատեսված ավազանների կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	Քաղաքացի Հրանտ Գուլանյան
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Արարատի մարզ, Ռանչպար բնակավայր

Ներածական մաս. Արարատի մարզի Մասիս խոշորացված համայնքի Ռանչպար բնակավայրում նախատեսվում է կառուցել ձկնաբուծարան: Ձկնաբուծարան գտնվում է Սիս բնակավայրից 3700մ, Նորամարգ և Ռանչպար բնակավայրերից համապատասխանաբար 3100մ և 200մ հեռավորությունների վրա, տարածքի մակերեսը կազմում է 4.51 հա: Մեծամոր գետի եզրագծից հեռավորությունը կազմում է 150մ:

Հողերի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության են, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը արդյունաբերական օբյեկտների, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականության:

Նախատեսվող գործունեությունը, հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետի ա) ենթակետի:

Նկարագրական մաս. Նախագծման աշխատանքների համար հիմք են հանդիսացել 2022 թվականի օգոստոսի 24-ին տրված №24082022-03-0059 անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականը:

Նախատեսվող գործունեության նպատակն է՝ կառուցել թվով 2 ավազան և իրականացնել Գետաձաձան, Լոքո և Պնդաճակատ ձկնատեսակների բուծում տարեկան 30-40 տոննա ծավալով:

1-ին ավազանը զբաղեցնում է 11900մ^2 տարածք, 2-րդ ավազանը 18900մ^2, ընդհանուր 30800մ^2 տարածք:

Ձկնատեսակներին բնական կենսամիջավայր ապահովելու համար ավազանները կկառուցվեն ափերից աստիճանաբար խորացումով, որտեղ առավելագույն խորությունը ավազանների

միջնամասերում ըստ նախագծի կկազմի մինչև 3.5 մետր, իսկ եզրային թմբերի բարձրությունը՝ 1.5 մետր:

Ավազանները կկառուցվեն փուլերով՝ 24 ամիսների ընթացքում, ինչը ժամանակ կտա ձկնատեսակների համար ավազաններում բնական կեսամիջավայրի ձևավորմանը:

Նախատեսվում է ջրառն իրականացնել Մեծամոր գետից: Նախատեսվող ջրառի կոորդինատներն են X= 40° 1'15.11" , Y= 44°22'24.25", H=825մ:

Գործունեության համար նախատեսվող տեղամասի անկյունային կետերի կոորդինատներն են. Կոորդինատական համակարգը ARM WGS84

	Կոորդինատներ	
	X	Y
1	8446728.1192	4432061.2034
2	8446709.3660	4432095.1609
3	8446704.7899	4432101.6589
4	8446698.7088	4432113.8101
5	8446693.9138	4432122.7342
6	8446693.6467	4432142.6795
7	8446693.8527	4432152.7677
8	8446693.9297	4432166.4879
9	8446690.9917	4432174.8400
10	8446686.6846	4432179.8881
11	8446683.6566	4432181.1121
12	8446679.6915	4432181.8921
13	8446668.1314	4432184.1861
14	8446655.7792	4432187.3502
15	8446639.3930	4432192.8222
16	8446623.1168	4432198.5743
17	8446604.2295	4432203.9124
18	8846601.1805	4432203.9164
19	8446599.1214	4432202.2634
20	8446590.2893	4432195.1723
21	8446583.5112	4432097.6919
22	8446573.6711	4432099.5179
23	8446568.9840	4432091.5938
24	8446568.9840	4432075.5545
25	8446565.6920	4432059.6023
26	8446545.2297	4431991.2123
27	8446541.3827	4431982.4852
28	8446539.3907	4431962.3889
29	8446538.3156	4431945.0007
30	8446536.8776	4431936.3435
31	8446534.4486	4431925.7754

32	8446531.6646	4431909.0641
33	8446530.0625	4431893.2389
34	8446527.6355	4431867.3485
35	8446525.9065	8446525.9065
36	8446525.1885	4431836.0491
37	8446524.0985	4431816.0438
38	8446524.0215	4431802.9046
39	8446524.4055	4431786.5974
40	8446527.8595	4431757.9410
41	8446537.6597	4431708.6013
42	8446536.8237	4431726.5815
43	8446538.6037	4431749.9559
44	8446538.3807	4431795.7135
45	8446540.4577	4431821.9049
46	8446540.8287	4431832.1620
47	8446544.4638	4431852.7873
48	8446549.4338	4431873.9536
49	8446552.9949	4431889.0499
50	8446557.4449	4431903.6731
51	8446564.3440	4431918.4433
52	8446568.2371	4431923.5974
53	8446571.0261	4431926.5454
54	8446573.5331	4431928.1614
55	8446575.9612	4431928 9874
56	8446773.4139	4431937.9376
57	8446769.1278	4431943.8497
58	8446764.5428	4431951.3068
59	8446760.8517	4431958.4509
60	8446757.9907	4431963.6430
61	8446753.9946	4431975.1671
62	8446752.7046	4431982.2112
63	8446751.6666	4431989.1423
64	8446751.4036	4431994.9674
65	8446748.5705	4432005.9996
66	8446742.7025	4432022.6068
67	8446735.5543	4432042.9731

Ավազանների կառուցման համար բետոնային աշխատանքներ չեն նախատեսվում: Կառուցման համար օգտագործվող տեխնիկաների ցանկը ներկայացված է ստորև.

- Էքսկավատոր ЭО-5111
- Էքսկավատոր ЭО-5111Б
- Բարձիչ ТО-18
- Բեռնատար ավտոինքնաթափ Краз 255

- 2 Բեռնատար ավտոինքնաթափ Կրաз 256 Բ1

Անհրաժեշտության դեպքում մեծ զանգվածով բեռներ տեղափոխելու համար կօգտագործվի նաև ավտոկռունկ:

Խմելու ջուրը բերվում է կցովի ջրի ցիստեռնով:

Տեխնիկական ջուրը մատակարարվում է ջրցան լվացող ավտոմեքենայով: Ջրառը կատարվելու է Մեծամոր գետից:

Կենցաղային կեղտաջրերի հեռացման համար նախատեսվում է բետոնային անջրաթափանց լցարան:

Կենցաղային կեղտաջրերը և կենսագործունեության արգասիքները համապատասխան կազմակերպությունների կողմից, պայմանագրային կարգով, պարբերաբար կհեռացվեն:

Կազմակերպությունների տարածքներից առաջացած չտեսակավորված կենցաղային աղբի ծավալը կկազմի 12տոննա:

Կազմակերպության տարածքում կտեղադրվեն պլաստմասե աղբամաններ, որոնցում կկուտակվի կենցաղային աղբը մինչև աղբավայր տեղափոխելը, որի համար համայնքապետարանի հետ օրենքով սահմանված կարգով կկնքվի համապատասխան պայմանագիր:

Թափոններ են առաջանում ավազանների կառուցման ընթացքում: Թափոնների գոյացման չափաքանակը որոշվել է նախագծային հաշվարկների հիման վրա, որը հավասար է 97800մ^3

Թափոնը կուտակվում է ժամանակավոր լցակույտերի տեղամասերում, որի մի մասն օգտագործվում է շինարարության ժամանակ խախտված տարածքների վերականգման, ավազանների եզրային բերմաների բարձրացման, և առկա ճանապարհների բարեկարգման նպատակով: Իսկ մնացած մասը կտրամադրվի (չօգտագործված շինարարական թափոնները, հողագրունտ) նույն ընկերությանը տեսակավորման և վերամշակման համար:

Աշխատանքների ավարտին չօգտագործված և չվերամշակված թափոնները (հողագրունտ) համապատասխան իրավասություն ունեցող մարմնի հետ համաձայնությամբ կտեղափոխվի իրենց իսկ կողմից հատկացված վայրում:

Հողաբուսական շերտի գոյացում նախատեսվող գործունեության տարածքում գրեթե տեղի չի ունենում:

Ըստ հայտում եղած տեղեկատվության բուն ուսումնասիրվող տարածքներում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չկան:

Նախատեսվող տեղամասը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքների սահմաններում:

Ռանչպար համայնքում պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ հաշվառված չեն:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

-Աշխատանքների ընթացքում բացառել տեխնիկատրանսպորտային միջոցների երթևեկությունը ճանապարհներից և շինհրապարակներից դուրս:

-Տեխնիկատրանսպորտային միջոցները վարել բացառապես գոյություն ունեցող ճանապարհներով, անհրաժեշտության դեպքում բարելավել այն:

- Շինհրապարակներում, ճանապարհներին և այլ արտադրական տեղամասերում, հատկապես չոր եղանակին, մշտապես կիրառել ջրցան մեքենաներ փոշենստեցման համար:

02543103 ՓՈՐՁԱՓՍԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

- Հողագրունտի տեղափոխման ժամանակ, հատկապես չոր եղանակին, բեռնատարների թափքը ծածկել, փոշու արտանետումները հնարավորինս մեղմելու համար:
- Տեխնիկական միջոցների վառելիքաքսուքային (յուղ, դիզել, բենզին և այլն) նյութերի վթարային արտահոսքը բացառելու համար տեխնիկատրանսպորտային միջոցները շահագործել միայն սարքին վիճակում:
- Հնարավորինս արագ վերակագնել խախտված հողաբուսաշերտը, եթե այդպիսին առկա է:
- Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հայտնաբերման դեպքում առանձնացնել տվյալ պահպանվող գոտին:
- Կենդանական աշխարհի ներկայացուցիչների բնադրման և թխսման ժամանակամիջոցում հնարավորինս նվազեցնել տեխնիկական միջոցների կիրառմամբ աշխատանքները:
- Ամբողջ շինարարական աշխատանքների ընթացքում հնարավորինս նվազեցնել աղմուկն ու լուսավորությունը:
Գործունեության ընթացքում իրականացվելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.
-Մթնոլորտային օդի մշտադիտարկումներ ամսեկան մեկ անգամ:
- Հողային ծածկույթի մշտադիտարկումներ՝ տարեկամ մեկ անգամ:
- Մակերևութային, գրունտային ջրերի մշտադիտարկումներ ամսեկան 1 անգամ:
- Վայրի բնության, կենսաբազմազանության մշտադիտարկումներ տարեկան մեկ անգամ:
Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնհանել 500.0 հազ.դրամ:
Պատճառաբանական մաս. Արարատի մարզի Մասիս խոշորացված համայնքի Ռանչպար բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հասարակությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, ինչպես նաև Արարատի մարզպետարանը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական աշխատանքների կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Գործունեությունն անհրաժեշտ է սկսել ձկնաբուծական տնտեսության համար նախատեսված ջրօգտագործման թույլտվության առկայության դեպքում:
- Անհրաժեշտ է ձկնաբուծական տնտեսության համար նախատեսված ավազանների կառուցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով: Այլ գործունեություն իրականացնելու դեպքում առաջնորդվել համապատասխան գործունեության օրենսդրությամբ սահմանված կարգով:
- Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ և արդյունքները ՀՀ կառավարության 2018թ.

փետրվարի 22-ի N191-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն:

- Իրականացվող աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում՝ նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական նորմերը:

- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

-Երևակման տարածքում ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակների հայտնաբերման դեպքում ձեռնարկել միջոցառումներ դրանց պահպանության համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, համաձայնեցնելով դրանք պետական կառավարման լիազոր մարմնի հետ:

– Երևակման տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանիների հայտնաբերման դեպքում, ընկերությունը պարտավոր է միջոցներ ձեռնարկել դրանց պահպանության համար, բացառելով տեսակների թվաքանակի կրճատումը և դրանց ապրելավայրերի վատթարացումը: Միջոցառումները պետք է համաձայնեցվեն պետական կառավարման լիազոր մարմնի հետ;

-Ավազանների կառուցումից հետո նախատեսել հարակից տարածքների բարեկարգում և կանաչապատում, Կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշման համապատասխան:

Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է ղեկավարվել ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Քաղաքացի Հրանտ Գուլանյանի/լիազորված անձ Սեյրան Գասպարյան/ կողմից ներկայացված Արարատի մարզի Ռանչպար համայնքի ձկնաբուծական տնտեսության համար նախատեսված ավազանների կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Գոհար Մինասյան